ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ԱրՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր- *Բառագիտական տիպ, բարբառագիտական տիպ, եռալեզվյա տիպ, միալեզվյա տիպ, հնչյունաբանական տիպ, ձևաբանական տիպ, մեթոդաբանական տիպ, մեթոդաբանական տեսական տիպ, մեթոդաբանական գործնական տիպ, միալեզվյա տիպ, պատմական տիպ:*

Ключевые слова*: Лексический тип, диалектический тип, трехъязычный тип, одноязычный тип, фонетический тип, морфологический тип, методологический тип, теоретический тип, методический и практический тип, исторический тип.*

Keywords*: The lexical type, dialectical type, trilingual type, monolingual type, phonetical type, morphological type, methodological type, theoretical type, methodical and practical type, historical type.*

С.Минасян

Типология лингвистических книг лекторов АрГУ

Лингвистические исследования книг, опубликованных лекторами кафедры армянского языка АрГУ, имеют словарный, научно-методический, практический характер. В них исследуются разные уровни армянского языка, история армянского языка, диалектология.

Обследованные нами книги, с точки зрения выявления того или иного лингвистического свойства, представляют разные типологические группы: фонетические, лексикологические, морфологические, синтаксические, диалектологические и т.д.

S.Minasyan

The Typology of Linguistic Books Published by Lectors of ArSU

The linguistic books by lectors of ArSU have vocabulary, scientific-methodology, practice features. They analyze different levels of Armenian language, the history of Armenian language, dialectology. We may point some typological classes: phonetic, lexicological, morphological, dialectological etc.

ԱրՊՀ հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնն առաջ առանձին չի եղել, այլ գրականության ամբիոնի հետ համատեղ աշխատել է երեսուն տարիներից ավելին: XXIդ. սկզբին առանձին ամբիոններ կոչվեցին: Եղած լեզվաբանական հիսունից ավելին գրքերից քառասունը հրատարակվել են առանձնացված ժամանակահատվածում, որոնք գիտական, գիտամեթոդական, գործնական բնույթի աշխատություններ են: Հիսունից ավելի լեզվաբանական այդ աշխատությունները արդի՝ ժամանակակից, հայոց լեզվի տարբեր բաժիններին, նրա դասավանդման մեթոդիկային, հայոց լեզվի պատմությանը, գրաբարին, Արցախի բարբառին, նրա բառարանագրությանն ու բանահավաքչական բնագավառներին նվիրված մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ ու բանահյուսական բարբառային նմուշների քննաբանական գրքեր են, որոնք կարելի է լեզվի տիպաբանական որևէ խմբի տեսակ համարել իրենց մեջ ընդգրկած նյութերի հիման վրա: Դրանք կազմելով *տիպաբանություն՝ նպատակ ունեն պարզելու բացահայտած ընդհանուր արտահայտության իմաստային ու կառուցվածքային պլանների տարբեր դրսևորումները, այսինքն՝ իմաստների, ձևերի իրականացման հնարավոր տիպերը* [1]:

Լեզվի ծագումնաբանական դասակարգման աշխատանքները կատարելիս՝ հատկապես 18-րդի դարավերջին ու 19-րդի դարասկզբին, պատմահամեմատական և տիպաբանական տարաբնույթ մոտեցումներ են ցուցաբերվել (Ռ. Դեկարտ, Լեյբնից, Ա. Սմիթ, Ս. Հերբեր, Ֆրիդրիխ ու Ավգուստ Վիլհելմ ֆոն Շլեգել եղբայրները և ուրիշներ): Այն առավել խորացվել է լեզուների ձևաբանական դասակարգում կատարելիս: Նույնն էլ շարունակվել է հայ լեզվաբանական աշխատություններում՝ մեր հանրահայտ լեզվաբանների կողմից (Հր. Աճառյան, Էդ. Աղայան, Գ.

[1] Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1974,38 էջ

Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Հ. Պետրոսյան, Վ. Համբարձումյան, Լ. Խաչատրյան և ուրիշներ): *Տիպ* բառը հունարեն նշանակել է 1. հատված, 2. նշան, 3. դրամի կնիք[1] :

Այդ բառույթը արդի բացատրական բառարաններում տասներեք իմաստ է բովանդակում,

ուր վերջին բացատրությունը լեզուների բաշխման գիտական հիմունքն է բնութագրում՝ *Լեզվի կառուցվածքային հատկանիշների որոշ համակարգ, որով բնութագրվում են աշխարհի լեզուների տիպաբանական խմբերը*[2] -[3]: Լեզվաբանական բառարանները տիպաբանականին՝ ձևաբանականին, անդրադառնում են ևս հին՝ ընդհանուր, ձևով[4],[5]: *Տիպաբանություն* բառույթը ժամանակակից՝ արդի հայերենի բացատրական բառարաններում ևս գիտականին մոտ է, բայց այնքան ընդհանուր, որ ներկա ժամանակահատվածում ցանկացած մոտեցման համար ճշգրիտ հիմունք է դառնում: *Տիպաբանություն գիտաբառն իր մեջ բովանդակում է առարկաների և երևույթների դասակարգումը նրանց որոշ հատկությունների ընդհանրության հիման վրա* [6],[7]:

Տիպաբանական աշխատանքների վերաբերյալ մանրամասն գիտական բացատրություններ են հղվում նաև Էդ. Աղայանի ընդհանուր լեզվաբանական վերջին վերամշակված հրատարակությունում[8] և Լ. Խաչատրյանի լեզվաբանության ներածություն աշխատությունում[9] :

Տիպաբանությունը, արդեն լեզվաբանական լայն կիրառություն ունեցող հասկացողություն լինելով, անընդհատ ընդլայնում է իր սահմանները: Ցանկացած *լեզվաբանական որևէ հիմունքով գերակշռություն կազմող ձև* տիպաբանությունն է ստեղծում: Օրինակ՝ արդի հայոց լեզվի գիտական բաժինների քննարկումները կատարվում են *հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական, ոճական* կամ խառնուրդ տեսանկյուններով, ուրեմն՝ հնչյունաբանական տիպ, տիպաբանություն են կազմում, կամ բառագիտական և այլն: Դրանք արդեն *տիպ, տիպաբանություն* են, որովհետև հիմնականում նկատի է առնվում *որևէ հասկացության, հատկանիշի կամ հատկանիշների հաճախականությունը*: Այս տեսանկյունով այժմ փորձենք ԱրՊՀ հայոց լեզվի ու նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում հրատատարակված հիսունից ավելի լեզվաբանական աշխատությունները տիպաբանական խմբավորման շրջանակներում դասակարգել: Ահա այդ քննաբանվող գրականության ցանկը, որի թվակարգը կգործածենք յուրաքանչյուր աշխատանք կարճ նշելու համար՝

1. **Ավանեսյան Կ. Հ.,** *Հոլովների և կապերի իմաստագործառական առնչակցությունը ժամանակակից հայերենում,* Ստ. 2006թ.,

2. **Բաբայան Օ. Ե.,** *Գրական արևմտահայերեն*, Ստ, 1997 թ., 3. *Փոխաբերությունն արդի հայերենում*, Եր., 1998թ., 4. *Գրաբար և միջին հայերեն,* Եր., 1998 թ., 5. *Հրապարակախոսական ոճ. լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ*, Ստ., 2002թ., 6. *Գրաբարի ձեռնարկ,* Ստ., 2005 թ., 7. *Գրաբարի ձեռնարկ* (վերամշակված), Ստ., 2010 թ, 8. *Արևմտահայերենի գործնական աշխատանքների ձեռնարկ*, Ստ., 2011 թ., 9. **Բաղդասարյան Գ. Խ.,** *Բայասեռի խնդիրները ժամանակակից հայերենում*, Ստ., 1995թ., 10. *Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր*, Ստ., 2003 թ. (2005թ), *Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան,* հ. Ա, Բ, Ստ., 2008, 2010 թ., 12. **Դավթյան Կ. Ս.,** *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզ*, Հայկ. ՍՍՌ ԳԱ հր., Ե., 1966 թ., 500 էջ (32 մամուլ), 13. **Զաքարյան Ա. Ս.,** *Լեզվական արտահայտչամիջոցների ուսուցումը որպես*

---

[1] Աճառյան Հր. Հ., *Հայերենի արմատական բառարան*, հ. IV, Համալսարանի հր., Ե., 1979 (վերահրատարակություն), 408 էջ:

[2] Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1442 էջ:

[3] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 400 էջ:

[4] Պետրոսյան Հր. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., 1975, 294 էջ:

5Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հր., Ե., 1987, էջ 172:

[6] Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1442 էջ:

7Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 500 էջ:

[8] Աղայան Էդ. Բ., Լեզվաբանության հիմունքներ (IV վերամշակում), Եր., 1987, էջ 687-694:

9Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Զանգակ-97 հր., Եր., 2008, էջ248-252:

կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման միջոց, Ստ., 2011 թ., 14. *Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականների խոսքային գործընթացում ակտիվացմանը նպաստող միջոցներ*, Ստ., 2014 թ., 15. **Խաչատրյան Ն. Գ.,** *Հակոբ Պարոնյանի երգիծանքի լեզվառճական ուսումնասիրություն*, Ստ., 2005 թ., 16. **Ղազարյան Հ. Ս..,** *Լեզվաբանական տերմինների համառոտ բառարան* (Ա-Ֆ), Եր., 2004 թ., 17. *Լեզվաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ*, Ստ., 2006 թ., 18. *Արցախի բանաստեղծական արվեստի լեզուն և ոճը,* Ստ., 2007 թ., 19. *Անգլերեն-ռուսերեն-հայերեն իրավաբանական եռալեզվյա թարգմանական բառարան* (11. 000 բառային միավոր, համահեղինակ՝ Ա. Մկրտչյան), Ստ., 2014 թ., 20. **Մինասյան Շ. Մ.,** *Ղարաբաղի բարբառի դարձվածները*, Ստ., 2007 թ., 21. *Հայոց լեզու և գրականություն,* (համահեղինակ՝ Ա. Սարգսյան, Ռ. Դադայան, Ա. Բաղդասարյան), Ստ., 2007 թ. (2008 վերահրատարակվել է), 22. *Ժամանակակից հայոց լեզվի կենտադրություն*, Ստ., 2012 թ., 23. **Մինասյան Ս. Ա.**, *Արցախյան արձակագիրների լեզվառճական մի քանի առանձնահատկություններ*, Ստ., 1997 թ., 24. *Արդի հայոց լեզու*, Ստ., 1999 թ., 25. *Բայ*, Ստ., 2002 թ., 26. *Մետաքսեի աշխարհը և լեզուն*, Ստ., 2003 թ., 27. *Հատուկ անուններից կերտված բայեր,* Ստ., 2004 թ., 28. *Հնչյունաբանության և բառագիտության ուսուցումը բուհում*, Ստ., 2007 թ., 29. *Բայի ուսուցումը բուհում,* Ստ., 2008 թ., 30. – *վ- երկրորդական ձևույթը հայերենում,* Ստ., 2008 թ., 31. Հնչյունաբանություն, բառագիտություն (թեստերի ուսումնամեթոդական ձեռնարկ, Շ. Սաղյանի հեղինակցությամբ, ԱրՊՀ, էլեկտրոնային գրադարան), 2010 թ., 32. *Չափար* (Հակառակաբերդ), Ստ., 2010 թ., 33. *Աստվածաշունչ հայոց լեզուն,* Ստ., 2011 թ., 34. Ա., *Բառաշերտային և իմաստաբանական մի շարք առանձնահատկություններ առակի ժանրում,* Ստ., 2012 թ., 35. ԱրՊՀ Հայոց լեզվի ամբիոնի գիտամեթոդական գրքերը, Ստ., 2014 թ., 36. Հովհաննես Շիրազ, Ստ., 2014, 416 էջ (52 մամուլ), 37. **Միրզոյան Ե. Ա.**, *Տմբլաչի Խաչանի «Զուռնա-տմբլայի» լեզվական արվեստը*, Ստ., 2007թ., 38. *Հայոց լեզու* (գործնական աշխատանքների ձեռնարկ գյուղատնտեսության բաժնի ուսանողների համար), Ստ., 2007 թ., 39. **Յարամիշյան Մ. Բ.**, *Գրաճանաչության ուսուցման մեթոդները հայ դպրոցում հնագույն շրջանից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը*, Ստ., 2007 թ., 40. *Գրուսուցման Ղազարոս Աղայանի մեթոդը,* Ստ., 2007թ., 41. *Մանկապարտեզի երեխաների խոսքի զարգացման տեսություն և մեթոդիկա,* Ստ., 2008 թ., 42. **Սաղյան Շ. Պ.,** *Պատմական ոճավորումը Հայկ Խաչատրյանի պատմավեպերում,* Ստ., 2004 թ., 43. *Հայոց լեզու* (գործնական աշխատանքների ձեռնարկ՝ իրավագիտության բաժնի ուսանողների համար), Ստ., 2002 թ., 44. *Հնչյունաբանություն և բառագիտություն* (թեստերի ուսումնամեթոդական ձեռնարկ, Ս. Մինասյանի հեղինակցությամբ, ԱրՊՀ, էլեկտրոնային գրադարան), 2010 թ., 45. *Հայոց լեզվի պատմություն. II* մաս: *Հայոց լեզվի պատմական քերականություն* (դասախոսություններ), Ստ., 2014 թ., 46. **Սարգսյան Ա. Յու.,** *Արցախյան հանելուկներ*, Ստ., 2002 թ., 47. *Արցախյան ավանդություններ*, Ստ., 2007 թ, 48. *Հայոց լեզու և գրականություն,* համահեղինակ՝ Շ. Մինասյան, Ռ. Դադայան, Ա. Բաղդասարյան, Ստ., 2007 թ. (վարժությունների ուսումնամեթոդական ձեռնարկ. վերհրտրկ., 2008 թ.), 49. *Շաղախի ենթաբարբառը: Հադրութի ենթաբարբառի միջավայրում*, Ստ., 2009 թ., 50. *Արցախի բանաձևային բանահյուսությունը*, Ստ. 2009 թ., 51. *Արցախյան առակներ,* Ստ., 2011 թ., 52. *Լեզվաբանության հիմունքներ (թեստեր),* Ստ., 2013 թ., 53. *Արցախի բարբառի բառարան,* Ստ., 2013 թ., 54. *Արցախյան զվարճախոսություններ,* Ստ., 2014 թ:

1. ***Բարբառագիտական տիպ***: Այս տիպի վեց աշխատությունները նվիրված են բուն արցախյան բարբառին՝ լեզվի բոլոր բաժինների խոր ուսումնասիրությամբ: Տեսական հանգամանալից աշխատանք է կատարել երջանկահիշատակ Կ. Ս. Դավթյանը (հիմքն ատենախոսությունն է. 12)՝ համապատասխան աղյուսակներով ու քննաբանված բառերի համեմատական ծավալուն շարքերով: Արցախյան բարբառում եղած դարձվածների շուրջ գիտական աշխատանք է ներկայացրել Շ. Մ. Մինասյանը (հիմքն ատենախոսությունն է. 20): Առկա են նաև երկու ստվարածավալ բառարաններ (բարբառային բնագրային օրինակներով և արդի գրական հայերենի մեկնություններով. 11, 53): Արցախի բարբառի շուրջ մասնակի աշխատանք է կատարել տողերիս հեղինակը՝ արցախյան արձակագիրների լեզվառճական առանձնահատկությունները քննարկելիս. 23), իսկ Ե. Ա. Միրզոյանն Արցախի բարբառի որոշ ձևերի քննաբանությանն է անդրադարձել Տմբլաչի Խաչանի բառապաշարի շրջանակներում (հիմքն ատենախոսությունն է. 37): Շաղախի և Հադրութի ենթաբարբառների զուգորդված մասնակի ուսումնասիրություն է կատարել Ա. Յու. Սարգսյանը (49)՝ կապված Հադրութի միջավայրի հետ: Արցախի ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրեր՝ իրենց համապատասխան ծավալուն օրինակներով

քննաբանություն է ներկայացրել Ա. Յու. Սարգսյանը՝ պարզաբանելով *ս* ճյուղի և արցախյան բարբառի լեզվաբանական տարաբնույթ հարցեր (46, 47, 49, 50, 51, 54):

2. ***Պատմական տիպ***: Հայոց լեզվի (գրաբար, միջին հայերեն և ընդհանուր) պատմական ասպեկտով քննարկված ուսումնամեթոդական աշխատանքներ են Օ. Ե. Բաբայանի *գրաբարին և միջին հայերենին նվիրված ձեռնարկները* (4, 6, 7) և Շ. Պ. Սաղյանի *հայոց լեզվի պատմության, պատմական քերականության* համառոտակի շարադրանքի բուհական դասագիրքը (45):

3. ***Արդի հայոց լեզու*** ա. (*Արևելահայերեն*՝ լեզվի տարբեր մակարդակներով)՝ **հնչյունաբանական տիպ՝** Ս. Ա. Մինասյանը հայոց լեզվի, այբուբենի և Մաշտոցի վերաբերյալ աշխատանք է ներկայացրել հայ գեղարվեստական չափածոյում սրանց մեծարումներին կից (33), **բառագիտական տիպ՝** Ս. Ա. Մինասյանը հատուկ անունների ստուգաբանություն է կատարել հայրենի գյուղին նվիրված աշխատանքում (32), իսկ *բառաշերտային և իմաստաբանական մի շարք առանձնահատկություններ է* քննարկել առակի ժանրում (34), **ձևաբանական տիպ՝** Գ. Խ. Բաղդասարյանը *ժամանակակից հայերենի բայասեռի խնդիրներ* է քննարկել (9), Կ. Հ. Ավանեսյանը *հոլովների և կապերի իմաստագործառական առնչակցությանն* է անդրադարձել ժամանակակից հայերենում (հիմքն ատենախոսությունն է. 1), Ս. Ա. Մինասյանը *բայագիտական հանրամատչելի ուսանողական դասագիրք է կազմել իր վարժություններով* (25): Ժամանակակից հայոց լեզվի տարբեր բաժինների **խառը տիպ՝ հնչյունաբանական և բառագիտական՝** տեսականի, գործնականի, աղյուսակների, գծապատկերների, ուղղագրական շարքերի համադրությամբ աշխատանք է ներկայացրել Ս. Ա. Մինասյանը (24, 28), **բառագիտական և ձևաբանական տիպ՝** Գ. Խ. Բաղդասարյանը *արդի հայերենի բայասեռի և բայակազմության* հարցերին է անդրադարձել (10), Ս. Ա. Մինասյանը հատուկ անուններից կերտված բայերի բառակազմական ու ձևաբանական հարցերն է քննարկել (27), *–վ- երկրորդական ձևույթի բառակազմական և ձևաբանական ընդլայնումներին է անդրադարձել՝ համապատասխան ծավալուն շարքերի ցուցակով* (30):

Ոճագիտական տիպ՝ ոճական տեսական հարցի քննություն է կատարել Օ. Ե. Բաբայանը *փոխաբերության շուրջ* (հիմքն ատենախոսությունն է. 3), *հրապարակախոսական ոճի լեզվաոճական մի քանի առանձնահատկություններ* է քննարկել (5): Առանձին հեղինակների անհատական-գեղագիտան ոճի ուսումնասիրություններ է կատարել Ս. Ա. Մինասյանը մի շարք *արցախյան արձակագիրների ստեղծագործություններում* (23), Շ. Պ. Սաղյանը *Հայկ Խաչատրյանի պատմավեպերի պատմական ոճավորման հարցեր է արծարծել* (հիմքն ատենախոսությունն է. 42), Հ. Ս. Ղազարյանը *Արցախի բանաստեղծական արվեստի լեզվաոճական քննարկումներ է կատարել* (հիմքն ատենախոսությունն է. 18), Ն. Գ. Խաչատրյանը *Հակոբ Պարոնյանի երգիծանքի լեզվաոճական ուսումնասիրությանն է անդրադարձել* (հիմքն ատենախոսությունն է. 15), Ե. Ա. Միրզոյանը Տմբլաչի Խաչանի *լեզվական արվեստն է քննարկել* (հիմքն ատենախոսությունն է. 37): **Խառը՝** Ս. Ա. Մինասյանը *Մետաքսեի լեզվարվեստին առնչվող մի շարք հարցեր* և գրականագիտական որոշ թեմաների է անդրադարձել (26), իսկ Հովհաննես Շիրազի բանարվեստի ոճագիտական հարցերին զուգահեռ գրականագիտական ու բառապաշարի բառարանն է կազմել (առավել մանրամասնված է հնչյութերի տարբերակիչ հատկանիշների և բայահիմքերի ու բառահարաբերական երկրորդական ձևույթների լեզվաոճական առանձնահատկությունները՝ նշված համապատասխան խորհրդանիշերով. այս աշխատանքի հիմքը՝ պոեմի շրջանակներում, նս ատենախոսությունն է. 36):

բ) *Արևմտահայերեն*՝ տրված է արդի արևմտահայերենի համառոտակի քննաբանությունն իր համապատասխան օրինակներով, աղյուսակներով ու գծապատկերներով (2):

4. **Մեթոդաբանական տիպ**. *տեսական՝* Մ. Բ. Յարամիշյանը *Ղազարոս Աղայանի գրուսուցման մեթոդին և հայ դպրոցում հնագույն շրջանից մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը գրաճանաչության ուսուցմանն* է անդրադարձել (39, 40, որոնք նաև իր ատենախոսությունն են), ինչպես նաև *մանկապարտեզի երեխաների խոսքի զարգացման տեսական ու մեթոդական խնդիրներն է* քննարկել (41), իսկ Ա. Ս. Զաքարյանը *կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացման միջոցներից լեզվական արտահայտչամիջոցների ուսուցումն* է դպրոցական հայեցակետով փորձել ներկայացնել (13, որը նս իր ատենախոսությունն է), ինչպես նաև *կրտսեր դպրոցականների խոսքը գործուն դարձնելուն* (*ակտիվացմանը*) *նպաստող միջոցներ*ն է քննարկել

(14): *Տեսական և գործնական* տիպ՝ համատեղված բուհական մեթոդիկային (խառը)՝ Ս. Ա. Մինասյանն անդրադարձել է բուհում հնչյունաբանության և բառագիտության ուսուցման հարցերին՝ դասախոսությունների, գործնականի՝ տարաբնույթ վարժությունների, առաջադրանքների, աղյուսակների, գծապատկերների, նկարների, լավագույն ասույթների, մեծարումների, ուղղագրական շարքերի համադրմամբ (28), իսկ ձևաբանությունից՝ բայի բուհական ուսուցմանը՝ տեսական ու ձևաբանական վերլուծությամբ՝ համադրված գործնական տարաբնույթ աշխատանքների (29):

5. **Գործնական տիպի** գրքեր:

ա) **Առաջադրանքային տիպ**՝ Բաբայան Օ. Ե., *արդի արևմտահայերենի գործնական աշխատանքներ* (8), Ղազարյան Հ., Ս. *լեզվաբանական գործնական աշխատանքներ* (17), դպրոցական լեզվաբանական հանրամատչելի գործնական աշխատանքներ՝ համահեղինակներ՝ Սարգսյան Ա. Յու. և Շ. Մ. Մինասյան (21, 48):

բ) **Թեստերի տիպ**՝ տպագրված, Սարգսյան Ա. Յու., Լեզվաբանության հիմունքներ (թեստեր. 52), Մինասյան Ս. Ա., Սաղյան Շ. Պ. (համահեղինակներ), հնչյունաբանական ու բառագիտական բոլոր թեմաներով թեստեր (էլեկտրոնային գրադարան. 31//44):

6. **Հանրամատչելի ուսումնամեթոդական տեսական ու գործնական աշխատանքների տիպ** այլ ֆակուլտետներում հայոց լեզու ուսումնասիրելու համար: Շ. Պ. Սաղյանը իրավագիտության բաժնի ուսանողների համար հայոց լեզվի տեսական ու մեթոդական գործնական աշխատանքների ձեռնարկ ունի (43), իսկ Ե. Ա. Միրզոյանը՝ *Հայոց լեզու* գյուղատնտեսության բաժնի ուսանողների համար (38): Շ. Մ. Մինասյանը *կենսաբանության* շուրջ տարաբնույթ աշխատանքներ է ծավալել (22):

7. Հանրամատչելի ուսումնամեթոդական **լեզվաբանական բառարանի տիպ:**

ա) **Միալեզվյա տիպ**: Արդի հայոց լեզվի հանրամատչելի լեզվաբանական *գիտական-բացատրական* բառարան՝ Ղազարյան Հ. Ս.՝ *լեզվաբանական գիտաբառերի համառոտ բառարան* (16) և Արցախի բարբառագիտական բառարան: Դրանք ստեղծվել են Գ. Խ. Բաղդասարյանի՝ *Արցախի բարբառի բառարան* (11) և Ա. Յու. Սարգսյանի կողմից (53): Ս. Ա. Մինասյանի կողմից կազմվել է Հովհ. Շիրազի բառառապաշարի հեղինակային բառարանատիպ աշխատանքը և կցվել հեղինակի հարյուրամյակին նվիրված գրքին (36):

բ) **Եռալեզվյա տիպ** (բազմալեզվյա)՝ թարգմանական, Ղազարյան Հ. Ս., անգլերեն-ռուսերեն-հայերեն իրավաբանական եռալեզվյա թարգմանական բառարան (հեղինակակից՝ օտար լեզուների դասախոս Մկրտչյան Ա., 19):

Գրականություն

I. Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1974, 588 էջ:

II. Աճառյան Հր. Հ., *Հայերենի արմատական բառարան*, հ. IV, Համալսարանի հր., Ե., 1979 (վերահրատարակություն), 676 էջ:

III. Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1616 էջ:

IV. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 828 էջ:

V. Պետրոսյան Հր. Զ. և ուրիշներ, Լեզվաբանական բառարան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., 1975, 318 էջ:

VI. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Հայաստան հր., Ե., 1987, էջ 688:

VII. Աղայան Էդ. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան* Ե., 1976, 1616 էջ:

VIII. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ., IV, Հայկ. ՍՍՀ ԳԱ հր., Ե., 1980, 828 էջ:

IX. Աղայան Էդ. Բ., Լեզվաբանության հիմունքներ (IV վերամշակում), Եր., 1987, 736 էջ:

X. Խաչատրյան Լ. Մ., Լեզվաբանության ներածություն, Զանգակ-97 հր., Եր., 2008, 304 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Միլվա Մինասյան-բ.գ.թ.,դոցենտ, ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն

E-mail: silvaminasyan50@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: